



ԳԵՈՐԳ ՄԱԴՈՅԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԵԱՆ

Ե. ՊԱՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՐ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԵՒ ԻՐ ՔՆՆԱՊԱՏՆԵՐԸ¹

Նին շրջանի հայ գրողների շարքում բոլորից շատ ուսումնասիրուել է Մովսէս Խորենացին²: Հայկական դասական աւանդութեամբ նա

¹ Ձնչին ընդմիջարկութիւններով թարգմանութիւն «էջմիածին» ամսագրի 2024 թ. Յաւելուածից՝ «5th-Century Author Movses Khorenatsi and his Critics», էջ 31–53: ^{1*} Ստացուել է՝ 7.7.2024, գրախօսուել է՝ 7.7.2024: էլ. հասցէ՝ ???:

² Համոզուելու համար բաւարար է անգամ թուցիկ հայեացք ձգել Պ. Յովհաննիսեանի կազմած «Մատենագիտութեանը»՝ Երեւան, 2013, 416 էջ: Մովսէս Խորենացուն երբեմն յիշում են Քերթոզ, երբեմն՝ որպէս Քերթոզհայր. օտար հրատարակութիւններում իր անունը գրում են Moses Khorenatsi կամ Xorenaci (E. BONFIGLIO, “Movsēs Xorenac’i”, Encyclopedia of the Medieval Chronicle, R.G. Dunphy ed. (Brill, Leiden, and Boston 2010), Moses of Khoren եւ նման ձեւերով. Խորենացու պատմութիւնն անգլերէն թարգմանող Ռօբերտ Ռօմսօնը տառադարձութիւն է կիրառում եւ գրում է Moses Khorenats’i. տե՛ս MOSES KHORENATS’I, History of the Armenians, Translation and Commentary on the Literary Sources by Robert W. Thomson, Harvard University Press, Cambridge, Massachusetts, London, 1978, հմմտ. Revised Edition, caravan books, Ann Arbor, Michigan, U.S.A., 2006: Ռօմսօնը տառադարձում է նաեւ յատուկ անունները, ինչպէս եւ այն բառերը, որ իր կարծիքով տարօրինակ, խորթ են: Բայց հեշտ է նկատել, որ առնուազն Խորենացու Պատմութեան ղէպքում տառադարձութիւնն աւելի շատ խոչընդոտում է, քան օգնում: Պէտք է ընդունել, որ տառադարձութեան կիրառումը միշտ չէ, որ օգուտ է: Երբեմն արտասանութեան փոխանցումն աւելի լաւ միջոց է, յատկապէս այն դէպքերում, երբ փոխանցուող լեզւում հնչիւնը կարելի է արտայայտել առանց որեւէ լրացուցիչ նշանի: Ռօմսօնի թարգմանութեան մէջ մի քանի անգամ կարելի է հանդիպել սխալ տառադարձուած բառերի: Շատ հայերէն բառեր այնքան սխալ կերպով են տառադարձուած, որ ղօժուարութեամբ միայն կարելի է կռահել դրանց իրական արտասանութիւնը, հայերէն ճիշտ արտասանութեանը քաջածանօթ լինելու դէպքում լոկ: Տառադարձութեան գլխաւոր թերութիւններից մէկն այն է, որ տարբեր հեղինակներ գործածում են տառադարձման տարբեր համակարգեր, եւ նոյն անունը Ռօմսօնի թարգմանութեան մէջ դառնում է Moses Khorenats’i կամ Movsēs of Xoren Դաուաէթի ուսումնասիրութեան պարագային: Մինչդեռ կարելի էր պարզապէս գրել Movses Khorenatsi՝ հասարակ եւ ճշգրիտ: Դիւրաւ տեսանելի է, որ Խորենացու անունը գրելիս ո՛չ “ē” (Movsēs)-ն է էապէս օգտակար ընթերցման համար, ո՛չ իսկ (Moses) տարբերակն է «ծանրակշիռ նպաստ» ապահովում “v”-ի կրճատմամբ: Ընդհանրապէս, տառադարձութիւնն իր այլազան նշաններով (և, Է...) կարգալը ղօժուարացնում է սովորական ընթերցողի համար, նրան ստիպելով

Ե. դարի հեղինակ է, սակայն աւելի ուշ մի շարք հայ եւ որոշ օտար հետազոտողներ իրենց կարծիքով անհամապատասխանութիւններ յայտնաբերեցին Խորենացու շարադրանքի եւ ընդունուած ժամանակագրութեան միջեւ ու սկսեցին մերժել նրա՝ Ե. դարի գրող լինելու իրողութիւնը: Այդ քննադատութիւնների մեծագոյն մասը գրուել ու նաեւ հիմնովին հերքուել է ԺԹ. եւ Ի. դարերում³, բայց, յընթացս ժամանակի հերքումները մոռացութեան են մատնուել, մինչդեռ հիմնաւորապէս հերքուած քննադատութիւնները, այնուամենայնիւ, շարունակաբար կրկնուել են՝ մշտապէս փորձելով Խորենացուն ներկայացնել բացասական բնորոշումներով⁴: Եւ այսպէս Խորենացուն ուղղուած քննադատութիւնները պարբերաբար կրկնում էին տարբեր գիտնականներ, երբեմն նշելով, երբեմն չնշելով, որ «իրենց միտքը» աւելի վաղ ասողներ են եղել, եւ դրանց ասածներն էլ իրենց ժամանակին ու տեղին հերքուել են: Այդ ամենի արդիւնքում մի իրավիճակ է ստեղծուել, որ ասպարէզը լցուել է Խորենացու բազմաթիւ քննադատներով: Սակայն իրականում քննադատները շատ են, բայց քննադատութիւն չկայ: Բո-

աւելի շատ մտածել տարբեր նշանների արտասանութեան, քան պարբերութեան արտայայտած իմաստի մասին: Բայց առաւել վատն այն է, որ երբեմն տառադարձութիւնը վնասում կամ արմատապէս փոխում է բուն իմաստն ու շարակարգը: Օրինակ՝ էջ 118-ին Թօմասօնը Խորենացու հատուածն այսպէս է թարգմանում.

«But, they say, Queen Sat'inik had great desire for the vegetable artakhur and the shoot tits' (ընդգծումը մերն է.՝ Գ. Ա. Մ.) from the table of Argavan»: Եւ դժուար թէ գտնուի անգլիախօս ընթերցող, որ մտածի, թէ «tits'»-ը ոչ թէ թռչուն է, ոչ թէ մարմնական բարեմասնութիւն, ոչ թէ հին անգլերէնից եկող tit-for-tat-ի չնչինը, այլ ընդամենը խոտաբոյս է, որ զրաբարից թարգմանուելիս տառադարձութեան «շնորհիւ» զտից-ից դարձել է ծիծ՝ ուղղակի իմաստով:

³ Իբրեւ նորագոյն հերքում յիշատակելի են Գաբրիէլ Սուլթանեանի (GABRIEL SOULTANIAN, The History of the Armenians and Mosēs Khorenats'i, Bennett & Bloom, 2011, 280 էջ) եւ Ա. Մուշեղեանի ուսումնասիրութիւնները. (Ա. ՄՈՒՇԵԳԿԵԱՆ, Մովսէս Խորենացու դարը, Երեւան, 2007, 412 էջ, հմմտ. A. MUSHEGHYAN, The Historical Arguments for the Date (5th century) of Writing "The History of Armenia" by Movses Khorenatsi, «Fundamental Armenology», № 1, 2015):

⁴ Տե՛ս օր.՝ G. TRAINA, Sasanian Iran in the Context of Late Antiquity, the Bahari Lecture Series at the University of Oxford, Ed. by T. Daryaei, 2018, էջ 109. «Առաւել խնդրայարոյց է Մովսէս Խորենացու Հայոց Պատմութիւնը, որ իբրեւ ժամանակագրական խառնակութիւններով լեցուն բնագիր բացասական համբաւ է վայելում հետազոտողների շրջանում»: Այստեղ 10-րդ ծանօթագրութեամբ հեղինակը նշում է՝ «Կարեւոր գրականութիւնից տե՛ս Gignoux 1999 and Garsoian 2003–2004)», հմմտ. Նոյնի Ancient Armenia: Evidence and Models, ELECTRUM * Vol. 28 (2021, էջ 17. «Փաստագրական առկայ խառնաշփոթը խիստ քննադատութիւն առաջացրեց, յարգիւնս որի յատկապէս Արեւմտւոքում բազմաթիւ գիտնականներ մերժեցին [Մովսէս Խորենացու երկասիրութեան] պատմական արժէքը: Այնպիսի հեղինակաւոր կարծիքով որպէս Թօմասօնին է, սահմանուում է, որ Խորենացու Պատմութիւնը ոչ միայն հակասական է, այլ նաեւ հիմնովին անվստահելի»:

լորի ասածը նույնն է, մէջը չհերքուած միտք, նորոյթ չկայ: Հին, մերժուած եւ հերքուած բաներն են կրկնում: Քերթողահօրը քննադատելու կապակցութեամբ կարճ բնորոշում է Ա. Մուշեղեանի ասածը. «Խորենացու դէմ բացասական քննադատութեան գազաթնակէտ պէտք է համարուի Պատմութեան Ռօբէրտ Թօմսօնի՝ 1978 թ. հրատարակուած Թօմսօնեան անգլերէն թարգմանութեան ներածութիւնը»⁵: Սակայն, այսուհանդերձ կարելի է ասել, որ Թօմսօնը քննական-հետազօտական-վերլուծական որեւէ էական ներդրում չի ունեցել Խորենացու դարը պարզելու կամ հերքելու գործում: Ասուածի օգտին են, թերեւս, հէնց իր հետեւեալ խօսքերը. «Մովսէս Խորենացուն հայերէնով ծանօթ շատ բնագրեր թարգմանուել կամ գրուել են այն ժամանակից յետոյ, երբ իր պնդմամբ գրել է Մովսէսը: Նրա Պատմութեան էջերում սպրդել են պատմական տարբեր յուշումներ, որոնք մեզ թոյլ են տալիս մերժել Ե. դարի թուագրումը: Յիշեալ հանգամանքները նշել են տարբեր գիտնականներ, որ պարզապէս կրկնել է Թումանովը, ուստի այստեղ հարկաւոր է լոկ հակիրճ երկրորդել (ընդգծումները մերն են.— Գ.Ա.Մ.)»⁶: Այսինքն Թօմսօնը խոստովանում է Թումանովի՝ պարզապէս կրկնելու եւ իր երկրորդելու հանգամանքը: Սրանից յետոյ Թօմսօնն ուղղակի մէջ է բերում Թումանովին: Բայց մինչ վերջինիս անդրադառնալը՝ յիշենք, որ Թումանովը եւս ոչ թէ խորասուզուել է Խորենացու ստեղծագործութեան մէջ, ո՛չ թէ յաղթահարել է գրաբարի դժուարութիւնները եւ պարզել, որ Խորենացու գրքում իրարից տարբերում են 5, 6, 7, 8-րդ դարերի լեզուաոճական առանձնատկութիւնները, այլ ընդամենը վերցրել ու «պարզապէս կրկնել է» այն ամենը, ինչը «նշել են տարբեր գիտնականներ», որոնց ասածները, ինչպէս շեշտել ենք, իրենց տեղում եւ իրենց ժամանակին ի սպառ հերքուել են:

⁵ Մ Ո Ւ Շ Ե Ղ Ե Ա Ն, The Historical Arguments. Տպագրական խնդիրները բացասաբար են ազդում այս աշխատանքի վերաբերեալ կարծիքի ձեւաւորմանը (հրատարակութեան էջերը համարակալուած չեն, 15-րդ ծանօթագրութիւնը յայտնուել է 16-ից յետոյ եւ այլն: Սակայն այս եւ նման թերութիւնների համար չի կարելի որեւէ կերպ հեղինակին մեղադրել, որովհետեւ նա զուրկ է տեսողութիւնից եւ չէր կարող վերահսկել անբարեխիղճ տպագրիչների աշխատանքը:

⁶ See MOSES KHORENATS' I, History of the Armenians, Translation and Commentary on the Literary Sources by Robert W. Thomson, Harvard University Press, Cambridge, Massachusetts, London, 1978, cf. Revised Edition, Caravan Books, Ann Arbor, Michigan, U.S.A., 2006, p. 57, բառացի նույնն է նաեւ 1978-ի հրատարակութիւնը, էջ 58: Հետագայ բոլոր յղումները Թօմսօնից կանենք ըստ 2006-ի հրատարակութեան:

Եւ այսպէս, տեսնենք՝ ի՞նչ է Թումանովի «կրկնութիւնը»-ը, որ հասկանանք, թէ ինչ է Թումանովի «երկրորդած»-ը⁷, եւ այդ երկուսի հիման վրայ որոշենք խորենացու բազմաթիւ քննադատութիւնների արժէքը:

Թումանովը գրում է. «Կեղծ-Մովսէսի աւանդական թուագրութեան դէմ ուղղուած փաստարկներից, ըստ իս, լաւագոյնները հետեւեալներն են.

(1) Ա. գրքի ժդ. գլխում Կեղծ-Մովսէսը հեռաւոր անցեալ է հասցնում Արեւմտեան Հայաստանի եւ հարեւան հողերի բաժանումը՝ Առաջին, Երկրորդ, Երրորդ եւ Չորրորդ Հայքերի, մինչդեռ այս բաժանումն իրականացրել է Յուստինիանոս Ա. կայսրը 536 թուին»: Այս միտքը հիմնաւորելու համար Թումանովը ցոյց է տալիս հետեւեալ աշխատութիւնը՝ Ադոնց, Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում⁸, աւելի ճշգրիտ՝ այդ գրքի 203-րդ էջի ներկայ հատուածը. «խորենացու էջերում պահպանած աւանդութիւնները, թէ՛ հայկական տիրոջթիւները նուաճումների ճանապարհով տարածուել են մինչեւ Պոնտական հողեր եւ Մաժակ-Կեսարիա, եւ որ այդ ամբողջ տարածքում հայերէն են խօսել, ըստ էութեան, Յուստինիանոսի դարաշրջանի իրադրութեան արձագանքն են (ընդգծումը մերն է. — Գ. Ա. Մ.), այլ ոչ թէ Արամի հեռաւոր ժամանակների, ինչպէս դա ներկայացնում է պատմիչը: Սա պարզ է դառնում նրանից, որ վերոյիշեալ հողերի գրաման հետ կապուած խորենացին յիշատակում է հայկական հողերի բաժանումը I, II, III եւ IV Հայքերի, բայց յամառօրէն դա վերագրում է Արամի առասպելական ժամանակներին՝ չվստահելով նշեալ բաժանման փաստացի իրականացման վերաբերեալ Հայաստանի կայսերական մասում շրջանառուող շուկներին»:

Եւ եթէ իրապէս Թումանովի պատկերացրած ու Ադոնցի «յայտնագործած» «Աւանդական թուագրման դէմ եղած լաւագոյն փաստարկներից» թէկուզ այս մէկը ճիշտ է, եւ «Առաջին, Երկրորդ, Երրորդ եւ Չորրորդ Հայք» «բաժանումն իրականացրել է Յուստինիանոս կայսրը 536-ին», ուրեմն իսկապէս Մովսէս խորենացին պէտք է ապրած եւ ստեղծագործած լինի 536-ից յետոյ: Բայց շտապենք հանգստացնել ընթերցողին. Թումանովի իմացած այս «լաւագոյն փաստարկը» հեշտութեամբ հերքում է, երբ

⁷ Չլոգնեցնելու համար յղումներով աւելորդ չենք ծանրաբեռնում տողատակը, որովհետեւ երկու վերոնշեալ հեղինակները բարեխղճօրէն թուարկել են բոլոր բացասական կարծիքները, մինչդեռ խորենացու օգտին խօսողները ըստ հարկադրանքի:

⁸ Պետերբուրգ, 1908, բնագրով՝ «Армения въ эпоху Юстиниана»: Ադոնցի եւ Թումանովի կապակցութեամբ տե՛ս նաեւ «Մի գրքոյկի առիթով», 2024, Զ., 125–143:

նայում ենք, օրինակ, Իօնուտ Հօլուբեանուի եզրակացությունների 2-րդ կէտին. «Դ. դարի վերջից մինչև 591 թուականը Սեբաստիա եւ Մելիտենէ եկեղեցական գաւառները յայտնի էին համապատասխանաբար «Առաջին Հայք» եւ «Երկրորդ Հայք» անուններով» (ընդգծումը մերն է. – Գ.Ա.Մ.)⁹: Այսինքն, ըստ այս գրառման, Հայաստանի համարաւոր-համարակալ բաժանում եղել է նաեւ Յուստինիանոս Ա. – ից առաջ, այնքան առաջ, որ Ե. դարի ցանկացած հեղինակ, ի թիւս այլոց նաեւ Խորենացին, կարող էր իմանալ եւ խօսել այդ մասին: Բայց սա դեռ ամենը չէ. Հօլուբեանուի եզրակացությունը ոչ թէ յայտնագործութիւն է, այլ ընդամենը փաստի արձանագրում, որ յայտնի է եղել անհամեմատ աւելի վաղուց, ինչպէս կարող ենք տեսնել, օրինակ, Փիթըր Էդմունդ Լօրանթի (1796–1837) տողերից. «Դիոկղետիանոսի եւ Կոստանդիանոսի ժամանակներում (ընդգծումը մերն է. – Գ.Ա.Մ.), գաւառները փոքր մասերի բաժանելիս, Փոքր Հայք ասածը դարձաւ Առաջին Հայք Գահերէցի իշխանութեամբ, իսկ Երկրորդ Հայքն իր կազմում ընդգրկեց բոլոր հարաւային տարածքները, որոնք կցուել էին Փոքր Հայքին, բացառութեամբ հարաւային Կապադովկիայի, որն ընդգրկուել էր Երկրորդ Կապադովկիայի կազմում»¹⁰: Այսինքն՝ տարածքների համարակալ բաժանումը եղել է առնուազն Դիօկղետիանոսի եւ Կոստանդիանոսի ժամանակներից, հետեւաբար, Ե. դարում ապրած ցանկացած գրող (ուստի եւ Մովսէս Խորենացին) կարող էր կիրառել «Առաջին, Երկրորդ, Երրորդ, Չորրորդ Հայք» կապակցությունները: Հետեւաբար, կարող ենք լիակատար վստահութեամբ ասել, որ Թումանովի պատկերացրած այս «լաւագոյն» փաստարկը, ինչպէս եւ Ադոնցի յայտնագործած 536 թուականը, վերանում են ոչ միայն իբրեւ «լաւագոյն», այլ ընդհանրապէս իբրեւ փաստարկ, որովհետեւ «յայտնագործուելու» պահին իսկ կանխաբար հերքուած են եղել Լօրանթի տողերով:

Այս հարցի վերաբերեալ խօսքն աւարտելով՝ ասենք, որ Խորենացուն Ե. դարում անշարժ պահելու համար լիովին բաւական է, որ համարակալ բաժանումը Դիօկղետիանոսի եւ Կոստանդիանոսի օրօք կատարուած լինի, բայց եւ խորապէս համոզուած ենք, որ իրականում բաժանումը տե-

⁹ SŃ IONUT HOLUBEANU, Armenia Prima and Armenia Secunda in the Original Epiphanius' Notitia Episcopatum, «5th International Multidisciplinary Scientific Conference on Social Sciences and Arts», SGEM, 2018, Conference Proceedings հտ. 5, էջ 228:

¹⁰ PETER EDMUND LAURENT, An Introduction to the Study of Ancient Geography, London, 1830, p. 234.

ղի է ունեցել հէնց Խորենացու պատմածի պէս՝ հէնց իր նշած դարաշրջանում: Ոչ թէ Յուստինիանոսը նոր բաժանումներ յայտնագործելու կարիք է ունեցել, այլ ընդամենը նոր հրամանով վերահաստատել կամ ընդունել է իրենից առաջ եղած բաժանումները:

Անցնենք առաջ:

Իբրեւ 2-րդ կէտ Թումանովը գրում է. «(2) Գ. գրքի ժը.— ում նա [Խորենացին] խօսում է իրանացւոց մասին, որ կայսրութեան դէմ մղուած պատերազմի ընթացքին հասել են Բիւթանիա: Պատմութեան մէջ այսպիսի բան առաջին անգամ տեղի է ունեցել 604–629 թուականների պատերազմի ժամանակ»¹¹:

Իբրեւ յոյժ ծանրակշիռ փաստարկ նույնը կրկնում է նաեւ Թօմասոնը՝ նախ Ներածականում (էջ 58), իսկ յետոյ «Հայոց պատմութեան» Գ. գրքի ժը. գլխի համապատասխան հատուածը թարգմանելիս: Այստեղ նա դարձեալ յիշում է Բիւթանիայի հետ կապուած պատմական խնդիրը. «Խալաթեանցը նշում է, որ Մովսէսի Բիւթանիա գրութեան եղանակը նոյնական է Աշխարհացոյցի հետ: Բայց, քանի որ սա Աստուածաշնչից եկող գրութեան

¹¹ Իբրեւ յղում Թումանովը ցոյց է տալիս Կոնիբերի յօդուածը՝ «Բրիտանիկա» հանրագիտարանում. «F. C. Conybeare signed also by A. v. Gutschmid [+ 1887], Encyclopædia Britannica, 11th ed. (1911): Վերջում Թումանովը Կոնիբերի հանրագիտարանային յօդուածի համար գրում է. «Սա, թերեւ, հեղինակի [Կոնիբերի] վերջնական կարծիքն է» (էջ 468): Այս «վերջնական կարծիք» արտայայտութեամբ Թումանովն ուզում է ասել, որ Օքսֆորդի համալսարանի պրօֆէսոր, անգլ. արեւելագէտ Կոնիբերի բոլոր միւս գրածները Խորենացու մասին այս հանրագիտարանային յօդուածից յետոյ այլեւ ոչինչ են՝ ի թիւս այլոց նաեւ այս տողերը. «Բայց որքան էլ նրանք նպատակ են հետապնդում, որ ցոյց տան, թէ Մովսէս Խորենացու պատմութիւնը գրուել է լոկ 750-ին կամ աւելի ուշ, այնուամենայնիւ, նրանց փորձերն ինձ ներկայանում են իբրեւ ձախող: Նրանց [պնդումների] մանրակրկիտ ուսումնասիրութիւնն իմ մտքում բոլորովին այլ համոզմունք է գրողմում. այն է՝ Մովսէս [Խորենացին] գրել է 460 թուականին՝ [ժամանակաշրջան], որ աւանդաբար վերագրուել է իրեն: [Եւ այդպէս է], քանզի Մ. Խալաթեանցը Մովսէսի Պատմութեան մէջ որեւէ հատուած չի նշում, որը վստահաբար պատճէնուած կամ ընդօրինակուած լինի 450 թուականից աւելի նոր որեւէ հայերէն բնագրից: Հնարաւոր է, որ Մովսէսը յօրինել է այն պատմութիւնը, որը վերագրում է Մար Աբաս Կատինային, ինչպէս պնդում էր պրոֆ. Կարիբեր իր ամենավաղ գրքոյկում: Ես իր հետ համաձայն չեմ այս հարցում, բայց այն, որ նմանատիպ մի պատմութիւն, որ դարձեալ վերագրում է Մար Աբասին եւ մոծուած է Սեբէոսի պատմութեան ձեռագրի սկզբում, վստահաբար չի ապացուցում, թէ Մովսէսը պատճէնել է Սեբէոսին: Այն աւելի շուտ հաստատում է Մովսէսի հաւաստիւթիւնը» (ընդգծումը մերն է.— Գ.Ա.Մ.): Տէս «The Date of Moses of Khoren» «Byzantinische Zeitschrift»-ում, 10, 1901, էջ 875: Այստեղ պէտք է միայն նկատենք, որ Թումանովի ասած «վերջնական կարծիք»-ն իրականում հանրագիտարանային յօդուած է, ուր Կոնիբերը կամ այլ ցանկացած մէկը, որ հանրագիտարանի համար նիւթ է գրում, ընդհանրապէս իրաւունք չունէր որեւէ անհատական կարծիք յայտնելու, այլ պէտք է ներկայացնէր բոլոր հնարաւոր տեսակէտները. ինչը եւ արել է Կոնիբերը:

ձեռն է, ոչինչ չի ապացուցում: Պարսկական արշաւանքը դէպի Բիւթանիա Մովսէսի թուագրման պարագային ցուցանշական է, քանի որ Հռոմէական տարածք նման խոր ներթափանցում տեղի է ունեցել լոկ եօթներորդ դարասկզբի պատերազմի ժամանակ: Տէն Սերէոս, գլ. ԼԸ., եւ Toumanoff, Studies, էջ 331. Մուշեղեանը, («Որտեղ է գտնուել...») պարսկական արշաւանքը դէպի Բիւթանիա աղերսակցում է Ամմիանոս Մարկէլինոսի XXV 4,24 հատուածի հետ եւ Բիւթանիան նոյնացնում Ասորիքում, Անտիոք քաղաքից ոչ հեռու գտնուած Բիթիլիա կամ Բիթիլիայի հետ»: Ինչպէս տեսնում ենք, Թոմսօնը զուտ միայն յիշատակում է Մուշեղեանի յօդուածը եւ, առանց որեւէ դրական կամ բացասական կարծիք յայտնելու դրա կապակցութեամբ, կարճառօտ տալիս է բուն գաղափարը: Բայց ո՛չ հերքում է, ո՛չ հաստատում: Հետեւաբար, Մուշեղեանի յօդուածը փաստացի պէտք է ընդունուի իբրեւ Բիւթանիայի հետ կապուած «պատմական կնճիռ» ասածի հերքում, քանի որ դրա դէմ որեւէ բան չեն գրել Խորենացու քննադատները: Ուշագրաւ է, որ Մուշեղեանի յօդուածը Թոմսօնը յիշատակում է տողատակում, մանր տառերով, սրան հակառակ՝ խոշոր տառերով ներածականում սիրով կրկնում է Թումանովին եւ նրա նախորդներին. «Մովսէսը տեղեակ է իրանցիների՝ դէպի Բիւթանիա արշաւանքին: Միայն 604—629 թթ. պատերազմի ընթացքում են իրանցիները այսքան հեռու առաջացել դէպի արեւմուտք» (էջ 58):

Ասուեց, որ Ա. Մուշեղեանը պատասխանել է «Բիւթանիայի հարցին»՝ մանրամասն եւ համակողմանի քննել է հարցը (19 էջ) եւ հերքել մեղադրանքը: Իսկ Թոմսօնն ընդամենը յիշատակում է Մուշեղեանի յօդուածը: Ի՞նչ է նշանակում այն փաստը, որ Թոմսօնը չի հերքում, չի մերժում, չի քննադատում Մուշեղեանի ուսումնասիրութիւնը: Օրինակ՝ Խալաթեանցի դէպքում՝ Մուշեղեանի յօդուածը յիշելուց 2 տող առաջ, Թոմսօնը գրում է. «Խալաթեանցը նշում է, որ Մովսէսի գրքում «Բիւթանիա» գրութիւնը նոյնական է Աշխարհացոյցի գրութեան հետ: Բայց քանի որ սա Աստուածաշնչից եկող գրութեան ձեռն է, ոչինչ չի ապացուցում (ընդգծումը մերն է. — Գ. Ա. Մ.)»: Այսինքն, ինչպէս տեսնում ենք, եթէ ասելիք լինում է, Թոմսօնը պարտադիր արտայայտւում է: Ուստի, Մուշեղեանի գրածի կապակցութեամբ լուռ մնալու հանգամանքը հաշուի առնելով՝ պէտք է մտածենք, որ վերջինիս յօդուածի կապակցութեամբ Թոմսօնը կամ հակափաստարկ չունի, կամ համամիտ է Մուշեղեանի հետ: Երկու դէպքում էլ պարզ է, որ պարսիկների Բիւթանիա հասնելու վերաբերեալ Խորենացուն ուղղուած

մեղադրանքն առ ոչինչ է, քանի դեռ Մուշեղեանի հիմնաւորումները չեն հերքուել:

Իսկ եթէ հետազայում կրկին ցանկացողներ լինեն՝ «Բիւթանիայի խնդիրը» շահարկելու, Մուշեղեանի յօդուածից բացի կառաջարկենք նկատի ունենալ նաեւ հետեւեալը. մի՞թէ համաշխարհային պատմութեան մէջ միայն 604–629 թթ. պատերազմի ժամանակ պարսիկները կարող էին հասնել Բիւթանիա: Մի՞թէ հնարաւոր չէ, որ անյիշելի քանակութեան պատերազմների ընթացքում աւելի վաղ որեւէ նմանատիպ ռազմական յաջողութիւն գրանցուած լինէր: 604–629-ից բացի ուրիշ պատերազմ չի՞ եղել, թէ՛ Խորենացու «հմուտ» քննադատները ողջ պատմութիւնն անգիր գիտեն եւ վստահ են, որ իրենց մատնանշածը միակ ու անկրկնելի դէպքն է:

Յիշենք մի կարեւոր հանգամանք. Խորենացին ոչ թէ ինքն իրենից էր գրում պատմութիւնը, ոչ թէ ուսման տարիներին իր սովորածն էր յիշողութեամբ-մօտաւոր, կիսատ-պռատ շարադրում, այլ այդ գործը նա անում էր տարբեր աղբիւրներ համադրելով: Եւ մշտապէս փորձում էր այդ աղբիւրների մէջ գտնել առաւել ստոյգը, ոչ թէ կուրօրէն կրկնել պատահածը: Եթէ վերցնենք Բիւթանիային վերաբերող գլուխն իր յարակից հատուածներով, կտեսնենք, որ Խորենացին ոչ միայն ճշգրիտ, յականէ-յանուանէ գիտէ ժամանակի իշխանաւորներին, ոչ միայն գիտէ պատահած դէպքերը, այլ նոյնիսկ գիտէ մանրամասներ, որ սակաւ են հանդիպում (օրինակ՝ Բերգիտիոն ամրոցի յիշատակութիւնը): Խնդրոյ առարկայ՝ բիւզանդական-պարսկական պատերազմին վերաբերող որոշ հատուածներում, Խորենացին ոչ միայն գիտէ, ասենք, ամրոցների պաշարման մասին, այլեւ գործողութիւնների մանրամասները: Գիտէ, որ բանակցութիւններ եղան յարձակուողների եւ պաշտպանուողների միջեւ, եւ այդ բանակցութիւնները Խորենացին ուղղակի խօսքով մէջ է բերում¹²: Կարճ ասած՝ դիտարկուող ժամանակաշրջանը նկարագրելիս Խորենացին վստահաբար աղբիւր (աղբիւրներ) ունի եւ դրան(ց) հետեւելով է կազմում իր խօսքը: Հէնց դրա շնորհիւ է, որ Խորենացին հետաքրքիր մանրամասներ գիտի ժամանակաշրջանի մասին: Եւ այդ մանրամասնութիւնների շարքը պէտք է դասել նաեւ դիտարկուող խնդիրը՝ Բիւթանիա հասնելուն վերաբերող հետեւեալ հատուածը. «...հասեալ ի Բիւթանիա, եւ նստէր ամիսս յոլովս: Եւ ոչ ինչ կարացեալ առնել՝ սին

¹² ԹՕԱ., 279–280, ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Գ. Խը.:

առ ծովուն կանգնէ, եւ առիւծ ի վերայ դնէ, մատեան ընդ ոտիւքն ունելով, որ նշանակէ այսպիսի ինչ. քանզի առիւծ հզօր է ի գազանս, նոյնպէս եւ պարսկականն ի թագաւորս. եւ մատեան ժողովիչ է իմաստութեան, որպէս Հռոմայեցւոց տէրութիւնն» (Ժը.): Այստեղ պէտք է յիշենք, որ հնէրը ոչ մի բան անտեղի եւ անիմաստ չէին անում եւ ասում: Եթէ արքան իրեն խորհրդանշում էր իբրեւ առիւծ՝ իր արեւմտեան թափ տակ առած, ապա որեւէ խոշոր յաղթանակ պէտք է արձանագրած լինէր, այլապէս իր հռչակածը կդիտարկուէր իբրեւ սին եւ դատարկաբանութիւն. մի բան, որ անվայել է Արեւելքի բնակչին, առաւել եւս արքային: Մեր խորին համոզմամբ՝ տեսարանը, որ նկարագրում է Խորենացին, աւելի շատ յիշեցնում է Շապուհ Ա.՝ ի դարաշրջանը, քան 602–628 բիւզանդաստանեան պատերազմը: Ի մասնաւորի Պատմահօր նկարագրութիւնը խիստ նման է Ե. դարի լատին պատմական մի երկի վկայութեանը. «Յիրաւի, երբ Վալերիանոսը պատերազմ էր մղում Միջագետքում, պարտուեց պարսից Շապուհ արքային, անմիջապէս գերեվարուեց եւ մինչ ծերութիւն անպատիւ ծառայութեան մէջ ապրեց պարսիկների մօտ: 6. Նա [Վալերիանոսը] երկար ապրեց, եւ յիշեալ տէրութեան արքան [Շապուհը] սովորութիւն ունէր, նրան [կայսերը] խոնարհուած վիճակում կանգնեցնում էր, որ ոտքը վրան դնի եւ այդպէս ձի բարձրանայ»¹³: Եւ չնայած այս աղբիւրն Արեւմտեան է, կասկածից վեր է, որ այդ տեսարանը կարելի էր տեսնել միայն Արեւելքում, ասենք՝ պարսից արքունիքում, կամ այնպիսի վայրում, ուր հնարաւոր էր հանդիպել պարսիկների արքային՝ այդ գործողութիւնը կատարելիս: Հետեւաբար այս տեսարանի ծագումը պէտք է կապել պարսկական միջավայրի եւ աղբիւրների հետ: Եւ ահա Մ. Սպրենգլինգի աշխատութեան մէջ կարդում ենք. «Այժմ լուսանկար ունենք, որը լաւն է, թէեւ դժուար թէ հասնի կատարելութեան, եւ որը զուգակցում է Սըր Աուրէլ Ստայնի շատ բծախնդիր ու մանրամասն նկարագրութեամբ («Iraq», հտ. III, 1936, վահանակ XVII, էջ 191-ի դիմաց, եւ էջ 194–196): Դրա հիմնական ներդրումը մեր նպատակների համար այն է, որ նոյնականացնում է ետնախորքի այն անձին, որի գլխին հանգչում է Շապուհի ձախ ձեռքը: Սա Ֆլանդէնի եւ Կոստի ենթադրած՝

¹³ Ancient History Sourcebook: A Booklet About the Style of Life and The Manners of the Imperatores (Sometimes Attributed to Sextus Aurelius Victor), Translated by Thomas M. Banchich, Canisius College Translated Texts, Number 1 (Canisius College. Buffalo, New York, 2018) -3rd edition.

վանական կեցուածքով հեզահամբոյր երիտասարդը չէ, որ հնարաւոր է Մարիագէսը լինի: Դա, պարզ ասած, ինչպէս սըր Աուրէլը հարուստ բառապաշարով նկատում է, հէնց ինքը՝ Վալերիանոսն է, որ մերկ ձեռքերն է պարզել, գուցէ նոյնիսկ կռացել-խոնարհուել է. թէեւ իր գլխից եւ իրանից բացի մնացեալ մասերը ծածկուած են Շապուհի ձիու եւ առաջնամասում կանգնածների պատկերներով»¹⁴: Դժուար չէ նկատել, որ «ետնախորքի անձը, որ «հէնց ինքը՝ Վալերիանոսն է», եւ «որի գլխին հանգչում է Շապուհի ձախ ձեռքը», պատկերը շատ նման է «ախոյեանին թաթի տակ առած առիւծի» պատկերին. Շապուհն այդպէս է պատկերացրել եւ նկարագրել իր եւ Վալերիանոս կայսեր յարաբերութիւնները: Ուղղակի մի տեսարանում Շապուհն ու Վալերիանոսը մարդկային կերպարներով են, իսկ Խորենացու տողերում խորհրդանշական՝ գրքի եւ առիւծի: Մեր կարծիքով՝ Խորենացու խօսքը ոչ թէ 602–628 թթ. պատերազմի մասին է, որի դէպքում «կեղծողը» պէտք է շփոթէր գրեթէ բոլոր տիրակալների անունները. (այսինքն՝ պարսկական կողմի դէպքում Խոսրովը պիտի դառնար Շապուհ, իսկ Վաղենտինիանոս ու Վաղէսը՝ Փոկաս եւ Հերակլ), այլ 253–260 թթ. դէպքերի, որոնց պարագային Պարսից թագաւորի անունն անփոփոխ է՝ Շապուհ: Ամփոփելով ասուածը՝ կարող ենք ասել, որ ըստ Մուշեղեանի՝ «Բիւթանիայի խնդիրը» ոչ թէ ժամանակագրական, այլ աշխարհագրական-տեղանունական վրիպում է, ուստի որեւէ կերպ չի կարող ազդել Խորենացու դարաշրջանը որոշելու ընթացքին: Վատթարագոյն դէպքում կարող է մեղադրանք լինել անբարեխիղճ-անուշադիր գրիչների դէմ, բայց ոչ երբեք Պատմիչի: Իսկ մեր տեսակէտով՝ ամենեւին պարտադիր չէ, որ Բիւթանիայի յիշատակութիւնը կապուած լինի բացառապէս 602–628 թթ. պատերազմի հետ: Առաւել մեծ հաւանականութեամբ այն կարող է 253–260 դէպքերի արձագանք լինել: Յամենայն դէպս, դրա օգտին է Խորենացու նկարագրած ռազմական մեծ յաջողութիւնը եւ դա խորհրդանշող՝ «առիւծ՝ մատեան ընդ ոտիւքն ունելով», որ իր զուգահեռը չունի 602–628 թուականների ճակատամարտերում, ի տարբերութիւն 253–260 թուականների, որ կարող է լիովին արդարացնել Խորենացուն:

Իբրեւ 3-րդ կէտ Թումանովն ասում է. «(3) Գ. իւզ. գլխում ակնարկ կայ Արշակ Գ. մահից յետոյ (մօտ 390 թ.) իշխանների առաջնորդի, իսկ կայ-

¹⁴ M. SPRENGLLNG, Third Century Iran: Sapor and Kartir, Prepared and Distributed at the Oriental institute University of Chicago, Chicago, 1955, p. 92.

սերական վերահսկողութեան տակ ընկած հայկական գաւառներում իշխանների «կոմէս»-ի պաշտօն հիմնելու մասին: Սա կարող էր լինել միայն 629 թուականին՝ Իրանի դէմ Հերակլ Ա. – ի յաղթանակով ստեղծուած իրավիճակի արձագանք»:

Թումանովի այս պնդմանը հակառակ հետաքրքիր վկայութիւն կայ Սուրբ Կիպրիանոս Անտիոքացու վարքում. «Հեղինակի նշած Տերէնտիոսը լինելու ամենահաւանական պատմական թեկնածուն Հայքի համանուն իշխան կոմէսն է (ընդգծումը մերն է. – Գ. Ա. Մ.), որ պաշտօնավարել է մօտաւորապէս 369–374 թուականներին¹⁵: Քանի որ եւ իշխան, եւ կոմէս կոչումները կրող Տերէնտիոսը ղեկավարել է ողջ Հայաստանը (Հայքի կոմէսը՝ Մեծ Հայքը, իշխան Հայոցը՝ Փոքր Հայքը), հետեւաբար, էվտօլմիոսը եւ Տերէնտիոսը միաժամանակ են պաշտօնավարել (էվտօլմիոսը՝ 370–374 թթ., Տերէնտիոսը՝ 369–374 թթ.), սակայն, պարզ է, որ նման հարցերի շուրջ նրանց համագործակցութիւնը քիչ հաւանական կլինէր»¹⁶: Նոյն կերպ նաեւ «Ամմիանոս Մարկելինոսի երկի պատմաբանասիրական մեկնաբանութեան» 1-ին գլխի ներածականում կարդում ենք՝ «Հայքի իշխան եւ կոմէս Տերէնտիոսը»¹⁷: Եւ վերջապէս՝ «Ուշ շրջանի Հռոմէական կայսրութեան կենսագրական ժողովածու» գրքում կարդում ենք. «Տերէնտիոս 2, Հայքի իշխան եւ կոմէս մօտ 369–374, ապա Վալերիայի իշխան (376)»¹⁸: Ինչպէս տեսնում ենք, Խորենացուն ուղղուած մեղադրանքը բացարձակ անհիմն է, եւ Հայքի կոմէս եւ առաջնորդող իշխան եզրերը յիշատակում են դեռեւս Դ. դարից՝ լիովին բաւարարելով Խորենացու՝ Ե. դարում ապրած լինելու համար «ներկայացուող պահանջները»:

Իբրեւ 4-րդ կէտ Թումանովը գրում է. «(4) Գ. կե. գլխում որպէս առասպելական Վաղարշակ արքայի ժամանակ գոյութիւն ունեցած [Խորենացին] յիշատակում է խազարներին, որ ոչ մի հայկական աղբիւր չի անում մինչ եօթներորդ դարավերջ՝ Անանիա Շիրակացու «Աշխարհագրութիւնը», որ ժամանակին վերագրուել է նոյն Կեղծ-Մովսէսին: Նոյն դարի սկզբին Սեբէոսն անուանապէս չի յիշում խազարներին»:

¹⁵ Տէս PLRE 1:881–82, 2-րդ Terentius-ը:

¹⁶ R. BAILEY, The Acts of Saint Cyprian of Antioch: Critical Editions, Translations, and Commentary, School of Religious Studies, McGill University, Montreal, January 2017, A thesis submitted to McGill University, in partial fulfillment of the requirements of the degree of Ph.D., 2017.

¹⁷ J. DEN BOEFT J.W. DRIJVERS D. DEN HENGST H.C. TEITLER, Philological and Historical Commentary on Ammianus Marcellinus XXX, LEIDEN • BOSTON, 2015

¹⁸ A. H. M. JONES, Prosopography of the Later Roman Empire, vol. I (A.D. 260–395), Cambridge, 1971, p. 881.

Այս մեղադրանքը պարզաբանելուց առաջ հարկ է ի մտի առնել մի քանի հանգամանք:

Ա) Պէտք է ընդունենք, որ վրանաբնակ քոչվորները, որ խազար են կոչում, հիմնականում խորհրդաւոր եւ անյայտ են, եւ դրանց վերաբերեալ կարծիքները հակասական են: Օրինակ՝ մի դէպքում կարդում ենք, թէ՛ «Բազում ուշագրաւ քննարկումներ են եղել խազարների ազգակցութեան վերաբերեալ [դրանց առնչակցելով]՝ մերթ հոների, մերթ արեւմտեան թիւրքերի հետ»¹⁹: Մի այլ տեղից իմանում ենք, թէ՛ «Գրաւոր աղբիւրներում պահպանուած տեղեկութիւնների եւ հնագիտական տուեալների հիման վրայ հեղինակը վերականգնում է Կասպից ծովի հիւսիսարեւմտեան տարածքի ուշ սարմատական ժամանակաշրջանի ցեղա-ազգային քարտէզը եւ եզրակացնում, որ խազիրներ ու Բասիլներ ասելիս պէտք է հասկանալ տարածաշրջանի՝ միջին սարմատական եւ վաղ ադուանական մշակութային աւանդոյթների կրող իրանախօս քոչվորներին»²⁰: Այսինքն՝ անգամ այսօր «խազար» անուանումը եւ դրա հետ կապուած հանգամանքները դժուարընկալելի են, առաւել եւս բարդ՝ բացատրելու համար: Հետեւաբար, խորենացուն ուղղուած մեղադրանքը պէտք է փորձենք ընկալել տարբեր շերտերով:

Բ) Պէտք է դիտարկենք, թէ ինչն է կասկածելին «խազարական հանգոյցը» («յայտնագործողների» համար՝ խազարների գոյութիւնն ընդհանրապէս, թէ պարզապէս նրանց գոյութիւնը խորենացու նկարագրած ժամանակաշրջանում: Այս հանգամանքներին նայելով՝ կարող ենք տեսնել, որ տուեալ մեղադրանքի կապակցութեամբ խորենացուն արդարացնելու գործում հայագիտութիւնը խնդիր չունի, որովհետեւ խազարների անունը ժառանգել ցանկացողներից շատերը արդեն իսկ նրանց հասցրել են վաղնջական ժամանակներ եւ աւելի հեռաւոր տարածքներ: Ինչպէս նկատում է հետազօտողներից մէկը՝ «Ադրբեջանցի պատմաբանը ժամանակագրօրէն աւելի հին է դարձրել հոների, բարսիլների եւ խազարների յայտնուելը Եւրոպայում»²¹: Թերեւս մեկնաբանութիւններն աւելորդ են:

Յաջորդ հարցը.

¹⁹ D. M. DUNLOP, the History of the Jewish Khazars, New York, Princeton University Press, 1967, p. 4.

²⁰ Տէս Մ. Гаджиев, Сообщение Хоренаци о Походе Хазир и Басил в 216 г. И Этнокарта Северо-Западного Прикаспия в Позднесарматский Период (in Russian), «Caucaso-Caspica-I», էջ 7.

²¹ Տէս Յ. Пилипчук, Миграции Огурских Племен, «Тюркологические исследования», 2019, том 2, № 4, էջ 64.

Գ) Արդեօք կարո՞ղ էին քոչուոր վրանաբնակները մի օր յանկարծակի-անսպասելի յայտնուել Կովկասում՝ նոր արօտավայրերի եւ կողոպուտի-թալանի նոր ասպարէզների որոնումների ժամանակ: Պարզ է, որ ոչ միայն կարող էին, այլեւ հէնց դա էր նրանց կեցութեան ձեւը: Եւ վերջին հարցը. Դ) Հնարաւոր է, որ այդ ամենն արտացոլուէր միայն մէկ հեղինակի գործում: Այստեղ պէտք է նկատենք, որ Խորենացու քննադատների կարծիքով՝ սրա պատասխանը պարտադիր պէտք է լինի բացասական:

Բերեալ հարցադրումներն ուշադրութեան առնելուց յետոյ գանք բուն մեղադրանքին. «Եօթներորդ դարի սկզբին Սեբէոսն անուանապէս չի յիշում խազարներին»: Եւ այստեղ դարձեալ հարց է առաջանում՝ մի՞թէ սա մեղք է: Եւ եթէ անգամ մեղք է, ապա դա Խորենացու մեղքն է, թէ՛ Սեբէոսի: Ինչն է խնդիրը. Սեբէոսը պարտաւոր էր իրենից առաջ յիշատակուած բոլոր ազգերն ու ցեղերը թուել «անուանապէս»: Եթէ այդպէս է, ուրեմն Սեբէոսի մեղքն աւելի է խորանում, երբ հաշուի ենք առնում, որ ոչ միայն Խորենացու ասած խազարներին չէ, որ չի յիշել «անուանապէս», այլ նաեւ Եղիշէի ասած՝ «խալնդուրք»-ին. բառ, որ ըստ ամենայնի, Եղիշէն նոյն կամ նոյնատիպ անհայրենիք-քոչուոր-վրանաբնակների համար է կիրառել: «Զարմանալի» զուգադիպութեամբ «խալնդուրք»-ը չկայ նաեւ «Աշխարհացոյցում»: Եւ ի՞նչ, ուրեմն Եղիշէն եւս Ե. դարից չէ՞: Սա է տրամաբանութիւնը, կամ ընդհանրապէս սա տրամաբանութիւն է, որ բառը կիրառելու կամ չկիրառելու համար հեղինակին դարից դար տանեն: Ո՞րն է այստեղ յանցանքը: Խորենացու գրքում կայ եւս չորս բառ (արտախուր, խաւարտ, տից, խաւարծի), որ ոչ միայն Սեբէոսի է. դարում, այլ եւ մինչ օրս՝ մինչեւ ԻԱ. հարիւրամեակ որեւէ հայ հեղինակ չի կիրառել: Ուրեմն ի՞նչ... դրա հիման վրայ կարելի է ապացուցել, որ Խորենացին ԻԲ. դարից է: Որեւէ բառ կիրառելը կամ չկիրառելը ի՞նչ է ապացուցում կամ բացայայտում: Գրիգոր Նարեկացին ունի բառեր, որոնք ո՛չ իրենից առաջ, ո՛չ իրենից յետոյ չեն կիրառուել. կարո՞ղ է սա ապացուցում է, որ այդպիսի գրող ընդհանրապէս չի եղել, թէ ուղղակի ցոյց է տալիս, որ Խորենացուն ուղղուած մեղադրանքն անհիմն է: Վերոբերեալ քննարկումից եւ հարցադրումներից ելնելով՝ կարող ենք միանշանակ եզրակացնել, որ «խազար» բառի կիրառութիւնը ոչ թէ յանցագործութիւն է, այլ պարզապէս կիրառութեան առաջին դէպքն է, որ պէտք է աւելի խորը կերպով ուսումնասիրել եւ ոչ թէ քարկոծել:

Իբրեւ 5-րդ կէտ Թումանովը գրում է. «(5) Նա [Խորենացին] Բ. կբ. — ում Վանայ լճից արեւելք ընկած տարածքի առընչութեամբ կիրառում է «Վասպուրական» անուանումը: Սակայն այս տարածքն այդպէս սկսել են կոչել միայն Հայաստանի 591 թ. բաժանումից յետոյ: Է. դարի սկզբին Սեբէոսը տակաւին տեղեակ չէ այս եզրին որպէս տեղանուն, այլ «Վասպուրական»-ը կիրառում է ածականաբար՝ «պարսկական»-ի «պատուոյ» համարժէք, ինչպէս եւ այդ կերպ նշելու համար տուեալ տարածքը, որը 591 թուականին յայտնուեց պարսկական ազդեցութեան տիրոյթում: Լոկ մօտաւորապէս 700 թուականին կազմուած «Պատմութիւն անցիցն Հայաստանի» (Narratio de rebus Armeniae) յունարէն թարգմանութեամբ մեզ հասած գործում է, որ Վասպուրականն առաջին անգամ ի յայտ է գալիս որպէս տեղանուն՝ այն ձեւով, ինչպէս դա գործածում է Կեղծ-Մովսէսը»:

Շարունակութիւնը՝ յաջորդիւ

